11
ՆՈՅԵՄԲԵՐԻ
2019



ԱՄՓՈՓԵԼՈՎ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 74-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ. ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

ԱՄՓՈՓԵԼՈՎ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ 74-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ. ԿԱՐԵՎՈՐ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1

1. **ՄԱԿ-Ի ԳԱ 74-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԳԼՈԲԱԼ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ** 2

1.1. ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ ԴՈՆԱԼԴ ԹՐԱՄՓԻ ԵԼՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ 3

1.2. ՉԺՀ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ ՎԱՆ ԻԻ ԵՎ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԱՐԵՆԴՐԱ ՄՈԴԻԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ 4

1.3. ՌԴ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ ՍԵՐԳԵՅ ԼԱՎՐՈՎԻ ԵԼՈՒՅԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ 5

1.4. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ 6

2. **ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ՄԱԿ-ՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ** 8

2.1. ԷՐԴՈՂԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԳԼՈԲԱԼ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄ 8

2.2. ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՊԱՐՍԻՑ ԾՈՑՈՒՄ ԵՎ ԻՐԱՆԻ ՇՈՒՐՋ ՍՏԵՂԾՎԱԾ ՃԳՆԱԺԱՄԵՐԻՆ. ԱՅԴ ՀԱՐՑԵՐՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ 10

2.3. ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԸՆԹԱՑՈՂ ՊԱՏԵՐԱԶՄԻ, ԻՍՐԱՅԵԼԱ–ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 12

3. **ՄԱԿ-Ի ԳԱ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ** 14

3.1. ՄԱԿ-ՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՇՏԱԴՐՈՒՄՆԵՐԸ 14

3.2. ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿ-Ի ԳԼԽԱՎՈՐ ԱՄԲԻՈՆԻՑ 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 17-30-ին Նյու Յորքում տեղի ունեցավ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի (ԳԱ) 74-րդ նստաշրջանը, որին մասնակցեց նաև ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորած պատվիրակությունը: Նստաշրջանի ընթացքում ելույթներով հանդես եկան տարածաշրջանի բոլոր երկրների ներկայացուցիչները, այդ թվում՝ վարչապետ Փաշինյանը, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը: Ուշագրավ ելույթներ ունեցան ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը, ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը, Թուրքիայի և Իրանի նախագահները, Սաուդյան Արաբիայի արտգործնախարարը:

Գաղտնիք չէ, որ երկրների մեծ մասը ՄԱԿ-ի ԳԱ ամբիոնը օգտագործում են արտաքին քաղաքական տարաբնույթ հարցերի շուրջ իրենց հիմնական մոտեցումները ներկայացնելու նպատակով: Այդ ամբիոնից հնչող ելույթները զուտ իրավիճակի նպատակահարմարությունից բխող տեքստեր չեն, այլ անցնում են լուրջ նախապատրաստական փուլ և բխում են տվյալ երկրների ռազմավարական պատկերացումներից: Տարբեր երկրների ներկայացուցիչների ելույթների, ինչպես նաև ՄԱԿ-ի ԳԱ շրջանակներում տեղի ունեցած մյուս իրադարձությունների ուսումնասիրությունը թույլ են տալիս հասկանալ Հայաստանի և տարածաշրջանի համար դրանց հիմնական ուղերձները:

ԳԱ հերթական ամենամյա նստաշրջանը տեղի էր ունենում մեր տարածաշրջանում՝ «Մեծ Մերձավոր Արևելքում», կարևոր դերակատարների հարաբերությունների աննախադեպ լարվածության պայմաններում: Այդ լարվածությունը պայմանավորված է առաջին հերթին Հորմուզի նեղուցում ստեղծված իրավիճակով, Սաուդյան Արաբիայի և Իրանի միջև ռազմատենչ հռետորաբանության խորացմամբ: Մյուս կողմից՝ Իրանի նկատմամբ ամերիկյան «առավելագույն ճնշման» քաղաքականությունը, Սիրայում, Աֆղանստանում, Պակիստանում, Իրաքում, Եմենում պահպանվող լարվածությունը, իսրայելա-պաղեստինյան հակամարտության շուրջ վերջին զարգացումները ավելի են թուլացրել տարածաշրջանի անվտանգային համակարգի հիմքերը: Միաժամանակ շարունակում է պահպանվել տարածաշրջանում մի շարք չլուծված հակամարտությունների, այդ թվում՝ Արցախյան հակամարտության թեժացման և ակտիվ պատերազմական գործողությունների վերսկսման վտանգը:

Պատահական չէ, որ տարածաշրջանում հետաքրքրություններ ունեցող գրեթե բոլոր երկրների ներկայացուցիչները ՄԱԿ-ի գլխավոր ամբիոնից իրենց ելույթներում մեծ տեղ էին հատկացրել վերոհիշյալ իրողություններին: Ինչ վերաբերում է Թուրքիային և Ադրբեջանին, ապա այս երկրների ներկայացուցիչների ելույթներում պահպանվում էր կոշտ հակահայկական հռետորաբանությունը: Արցախյան հակամարտության կարգավորման վերաբերյալ ՀՀ վարչապետի համեմատաբար մեղմ ելույթին և զիջումների ակնարկներին ադրբեջանական կողմը պատասխանեց պատերազմի սպառնալիքներով և ավելի կոշտ դիրքորոշմամբ: Սա լավագույնս նկատվեց նաև ՄԱԿ-ում Հայաստանի և Ադրբեջանի մշտական ներկայացուցիչների բանավեճի ժամանակ, որը ընդգծեց հակամարտության կարգավորման հարցում երկու կողմերի տրամագծորեն հակառակ դիրքորոշումների առկայությունը:

ՄԱԿ-ի ԳԱ 74-րդ նստաշրջանի կարևոր ելույթների և իրադարձությունների հիմնական ուղերձները հասկանալու համար հարկավոր է դրանք դիտարկել մի քանի հարթությունների վրա: ԱՄՆ-ի, ՌԴ-ի, ՉԺՀ-ի, Հնդկաստանի, ԵՄ-ի ներկայացուցիչների ելույթների և դրանց հիմնական շեշտադրումների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ԳԱ-ի հիմնական ուղերձները դիտարկել գլոբալ հարթության վրա, հասկանալ գլոբալ զարգացումների հնարավոր ազդեցությունը տարածաշրջանի և Հայաստանի վրա: Մերձավոր Արևելքում հիմնական զարգացումների վերաբերյալ գլխավոր դերակատարների դիրքորոշումները հասկանալու տեսանկյունից կարևոր է նաև Թուրքիայի, Իրանի, Իսրայելի, Սաուդյան Արաբիայի ներկայացուցիչների ելույթների ուսումնասիրությունը: Հարավային Կովկասում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ պատկերացում կազմելու համար հարկավոր է ուսումնասիրել ինչպես վերոհիշյալ երկրների, այնպես էլ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ներկայացուցիչների ելույթներն ու հանդիպումները:

1. ՄԱԿ-Ի ԳԱ 74-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԳԼՈԲԱԼ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ

Աշխարհում գլոբալ մակարդակով տեղի ունեցող իրադարձությունների մասին հնարավոր է որոշակի պատկերացում կազմել՝ ուսումնասիրելով ՄԱԿ-ի ԳԱ հերթական նստաշրջանի ժամանակ հիմնական դերակատարների ելույթները: Այս տեսանկյունից ուշագրավ էին ԱՄՆ նախագահ Թրամփի, ՌԴ և ՉԺՀ արտգործնախարարների, Հնդկաստանի վարչապետ Նարանդրա Մոդիի, Եվրոպայի խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկի, Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի և ԳԴՀ արտգործնախարար Հեյկո Մաասի ելույթները: Ստորև կանդրադառնանք դրանցից յուրաքանչյուրի հիմնական ուղերձներին:

1.1. ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ելույթի հիմնական շեշտադրումները

ԱՄՆ նախագահ Թրամփի ելույթը ՄԱԿ-ի ԳԱ 74-րդ նստաշրջանի ժամանակ նշանավորվեց ընդգծված հակագլոբալիստական և պրոտեկցիոնիստական մոտեցումներով: Շեշտադրելով ԱՄՆ ռազմական հզորությունը և այդ նպատակով հատուկ նշելով, որ իր նախագահության տարիներին ԱՄՆ-ը ռազմական ոլորտում ծախսել է ավելի քան 2,5 տրիլիոն դոլար՝ Թրամփը միաժամանակ խոսեց մի երկրի կողմից այլ ազգերի և պետությունների ճակատագիրը տնօրինելու ձգտման անթույլատրելիության մասին: Նրա համոզմամբ՝ «ազատ աշխարհը պետք է ընդունի իր ազգային հիմքերը. չպետք է փորձի ջնջել կամ փոխարինել դրանք»:

Իր ելույթում Թրամփը կոչ էր անում. «Եթե ազատություն եք ուզում՝ հպարտացեք ձեր երկրով, եթե ժողովրդավարություն եք ուզում՝ պահպանեք ձեր ինքնիշխանությունը, եթե խաղաղություն եք ուզում՝ սիրեք ձեր երկիրը»: Նրա համոզմամբ՝ «ապագան պատկանում է ոչ թե գլոբալիստներին, այլ հայրենասերներին, ովքեր հարգում են այն տարբերությունները, որոնք յուրաքանչյուր պետություն դարձնում են յուրահատուկ»: Այսպիսով, ԱՄՆ նախագահի ուղերձի մի զգալի հատվածը ուղղված էր ծայրահեղ լիբերալիստական այն շարժման դեմ, որը հայտնի է մի շարք երկրներում գունավոր հեղափոխությունների կազմակերպման և գլոբալ լիբերալ արժեքների տարածման փորձերով: Այս ուղերձը նաև ուղղված էր ԱՄՆ ներքին լսարանին, քանի որ լիբերալ արժեքների և գլոբալիզացիայի գաղափարի հիմնական հեղինակներն ու պաշտպանները Թրամփի հակառակորդ դեմոկրատներն ու նրանց հարող մի շարք կազմակերպություններն են:

Նույն համատեքստում կարելի է դիտարկել Թրամփի հորդորը ՆԱՏՕ-ի շրջանակներում ԱՄՆ դաշնակիցների կողմից ռազմական ծախսերի բեռը ավելացնելու մասին: ԱՄՆ նախագահի ելույթի մյուս հատվածը նվիրված էր միջազգային առևտրի վերաբերյալ իր պատկերացումներին և այս ուղղությամբ Չինաստանի հետ հակասություններին: Նրա համոզմամբ՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) կտրուկ բարեփոխման կարիք ունի. Թրամփը գտնում է, որ աշխարհի երկրորդ ամենախոշոր տնտեսությանը (Չինաստանին) չպետք է հնարավորություն տրվի ներկայանալու որպես զարգացող երկիր՝ օգտվելով այդ կատեգորիայի երկրների համար նախատեսված առավելություններից: Հենց այս մոտեցմամբ է նա բացատրում Չինաստանի նկատմամբ իր կառավարության որդեգրած պրոտեկցիոնիստական քաղաքականությունը և ՉԺՀ-ի հետ «առևտրային պատերազմները»: Ընդհանուր առմամբ՝ Թրամփի ելույթում Չինաստանի թեման առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում. նա խոսեց նաև Հոնկոնգում ստեղծված

իրավիճակի մասին՝ ակնարկելով, որ այդ հարցում ՉԺՀ իշխանությունների գործողությունները լինելու են Վաշինգտոնի ուշադրության կենտրոնում[1]:

Չնայած հակագլոբալիստական հայտարարություններին, ինքնիշխանության և ազգային առանձնահատկությունների կարևորմանը՝ Թրամփի ելույթում առկա էին հակասություններ. նա իր խոսքում անդրադարձավ Հոնկոնգի ցույցերին, քննադատեց Իրանի, Վենեսուելայի իշխանությունների ներքին քաղաքականությունը: Սակայն ուշագրավ է, որ Թրամփը ոչինչ չխոսեց ՌԴ-ի մասին: Ելույթում թիրախավորելով ՉԺՀ-ին՝ ԱՄՆ նախագահը ցույց տվեց, որ ձևավորվող բազմաբևեռ աշխարհում որպես գլխավոր մրցակից դիտարկում է ոչ թե Ռուսաստանին, այլ Չինաստանին:

1.2. ՉԺՀ արտգործնախարար Վան Ի-ի և Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի ելույթները

Ի հակադրություն ամերիկյան կողմի հիմնական ուղերձներին՝ ՉԺՀ արտգործնախարար Վան Ին իր ելույթում կարևորում էր ազատ համաշխարհային առևտրի գաղափարը և դրանում ԱՀԿ-ի առանցքային դերը: Ի տարբերություն Թրամփի՝ ՉԺՀ արտգործնախարարը հանդես է գալիս գլոբալիզացիայի աջակցության դիրքերից՝ նշելով, որ այն պետք է առաջ ընթանա ավելի բաց, ներառական, բալանսավորված ճանապարհով: Փաստորեն, չինական կողմը Թրամփի հակագլոբալիստական ելույթին պատասխանում է գլոբալիստական գաղափարների պաշտպանությամբ՝ առաջարկելով գլոբալիզմի սեփական մոդելը՝ որը չի ենթադրում այլ երկրների ինքնիշխանության անտեսում, այլ իր հիմքում կրում է բացառապես ազատ տնտեսական հարաբերությունների և համատեղ խաղաղ զարգացման գաղափարները:

Իր ելույթում Չինաստանի արտգործնախարարը քննադատեց ԱՄՆ-ի կողմից վարվող պրոտեկցիոնիստական քաղաքականությունը՝ նշելով, որ վերջինիս միակողմանի գործողությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ համաշխարհային տնտեսության վրա: Նրա համոզմամբ՝ Վաշինգտոնի գործողությունները կարող են ոչ միայն վնասել բազմակողմ առևտրի համաշխարհային համակարգը, այլև հանգեցնել համաշխարհային տնտեսության անկման: Վան Ին հավաստիացրեց, որ նման գործողությունները չեն կարող ճնշել Չինաստանին և բախվելու են վերջինիս հակաքայլերին: Ընդհանուր առմամբ՝ նա կոչ

[1] Remarks by President Trump to the 74th Session of the United Nations General Assembly (September 25, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.whitehouse.gov/briefings-statements/remarks-president-trump-74th-session-united-nations-general-assembly/ (այցելվել է 06.11.2019թ.)

արեց հավատարիմ մնալ միջազգային իրավունքի սկզբունքներին և միջազգային հարաբերություններում հաստատված կարգերին[2]:

Մերձավոր Արևելքում և այլ տարածաշրջաններում առկա հակամարտությունների լուծման հարցում ՉԺՀ-ը պաշտպանում է միջազգային համաձայնագրերով ձեռք բերված պայմանավորվածությունների կատարումը և միջազգային իրավունքի գերակայությունը: Ընդհանուր առմամբ՝ ՉԺՀ արտգործնախարարի ելույթից կարելի է եզրակացնել, որ Չինաստանը ձգտում է ստանձնել գլոբալիզացիայի գաղափարի հիմնական խրախուսողի դերը՝ այն հարմարեցնելով իր կողմից որդեգրած արտաքին քաղաքական գերակայություններին և մարտավարությանը: Գլոբալիզացիան՝ չինական պատկերացմամբ ենթադրում է ազատ առևտրի պահպանում և կոշտ ուժի կիրառումից հրաժարում, ինչը Պեկինին հնարավորություն կտա առևտրատնտեսական գործիքների և փափուկ ուժի միջոցով ամրապնդել իր դիրքերն աշխարհում:

Ինչ վերաբերում է Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի ելույթին, ապա նա մեծ մասամբ ներկայացնում էր վերջին տարիներին Հնդկաստանի ունեցած ձեռքբերումները: Ընդհանուր առմամբ՝ Մոդին նույնպես հանդես էր գալիս ազատ առևտրի և գլոբալ համագործակցության խորացման գաղափարների պաշտպանության դիրքերից[3]: Ուշագրավ է, որ ԱՄՆ այցի շրջանակներում Հնդկաստանի վարչապետը ԱՄՆ նախագահ Թրամփի ուղեկցությամբ մասնակցել է տեղի հնդկական համայնքի ներկայացուցիչների կազմակերպած հանրահավաքին, որին մասնակցել են տասնյակ հազարավոր հնդիկներ:

1.3. ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի ելույթի հիմնական շեշտադրումները

ՌԴ արտգործնախարար Լավրովը ՄԱԿ-ում իր ելույթի ժամանակ նույնպես խոսեց բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման մասին՝ նշելով, որ Արևմուտքը չի համակերպվում համաշխարհային գործերում դարեր շարունակ ունեցած գերիշխանության կորստի հետ: Ըստ նրա՝ արևմտյան երկրները հետզհետե ավելի հաճախ են անտեսում միջազգային իրավունքը և առաջ մղում սեփական կանոնները. օրինակ, եթե իրենց ձեռնտու է, ապա ազգերի ինքնորոշման իրավունքին մեծ նշանակություն է տրվում, իսկ այլ դեպքերում այն անտեսվում է: ՌԴ

[2] Speech by Wang Yi at the General debate of the 74th session of the United Nations General Assembly (full text) (2019-09-29), հասանելի է հետևյալ հղումով՝ www.chinanewsportal.com/news/2019/0929/0709/5d8-fecfb16047879464a5d1b (այցելվել է 06.11.2019թ.)

[3] Prime Minister's address to the UNGA(September 27, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.narendramodi.in/prime-minister-s-address-to-the-unga-546657 (այցելվել է 06.11.2019թ.):

արտգործնախարարի կարծիքով՝ Արևմուտքի այս գիծը ընդօրինակվում է նաև որոշ հետխորհրդային երկրների կողմից:

Լավրովը իր ելույթում նաև պաշտպանեց ՄԱԿ-ի ԱԽ բարեփոխումների գաղափարը՝ այն կապելով բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման հանգամանքի հետ: Ըստ նրա, ելնելով առկա աշխարհաքաղաքական իրողություններից, ՄԱԿ-ի ԱԽ-ում պետք է ներկայացված լինեն Աֆրիկայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի որոշ երկրներ, ինչը թույլ կտա հաղթահարել ներկայումս այդ կառույցում առկա աշխարհաքաղաքական անհավասարակշռությունը: Ինչպես ՉԺՀ արտգործնախարարը, Լավրովը նույնպես պաշտպանում է ԱՀԿ նորմերի պահպանման գաղափարը, հանդես է գալիս պրոտեկցիոնիզմի, առևտրային պատերազմների, միակողմանի պատժամիջոցների, դոլարի ընձեռած հնարավորությունների չարաշահման ամերիկյան քաղաքականության դեմ: ԱՄՆ-ի դեմ ուղղված քննադատությունների մի մասն էլ կապված էին վերջինիս կողմից միջուկային զենքի և բալիստիկ հրթիռների սահմանափակման, չտարածման հարցերում համագործակցությունից հրաժարվելու հետ:

ՌԴ արտգործնախարարը իր ելույթում նաև անդրադարձավ համաշխարհային ինտեգրացիոն գործընթացների ներդաշնակեցման անհրաժեշտության հարցին: Նա կարևորեց մեծ եվրասիական գործընկերության գաղափարը, որը ենթադրում է մի շարք ինտեգրացիոն գործընթացների՝ ԵԱՏՄ-ի, Շանհայի համագործակցության կազմակերպության, ԱՍԵԱՆ-ի, ԵՄ-ի միջև տնտեսական ինտեգրացիայի խորացում: Որպես այդ ուղղությամբ կարևոր քայլ՝ Լավրովը համարում է ԵԱՏՄ-ի և չինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ծրագրերի համադրումը[4]:

1.4. Եվրոպական միությունը ներկայացնող հիմնական դերակատարների ելույթները

Եվրոպայի խորհրդի նախագահ Դոնալդ Տուսկը ՄԱԿ-ի ԳԱ-ում իր ելույթի ժամանակ հակադրվեց ԱՄՆ նախագահ Թրամփի կողմից հայրենասիրության և գլոբալիզմի գաղափարների տարանջատման փորձին: Ըստ նրա՝ 21-րդ դարում հայրենասիրությունը պետք է ունենա նաև գլոբալ չափորոշիչներ, իսկ հակառակ գաղափարը, եթե անգամ ունի շատ կողմնակիցներ, սխալ և վտանգավոր է: Տուսկը իր այդ մոտեցումը բացատրում է նրանով, որ մարդկության պատմությունը ցույց է տվել,

[4] Выступление Министра иностранных дел России С.В.Лаврова на общеполитической дискуссии 74-й сессии Генеральной Ассамблеи ООН, Нью-Йорк, 27 сентября 2019 года (28.09.19), հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/3822351 (այցելվել է 06.11.2019թ.):

թե ինչպես հայրենասիրության որոշ դրսևորումներ կարող են հանգեցնել հարևանների նկատմամբ ատելության խորացման[5]:

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը, անդրադառնալով գլոբալիզմի մասին Թրամփի դիտարկումներին, նշեց, որ ինքը նույնպես դեմ է գլոբալիզացիայի այնպիսի մեխանիզմների ստեղծմանը, որոնք կհանգեցնեն մարդկային ճակատագրերի տնօրինմանը վերջիններիս փոխարեն: Սակայն նա նաև նշեց, որ վերադարձը ազգայնականությանը չի հանգեցնի առկա ճգնաժամերի ավելի արդյունավետ լուծմանը. ըստ նրա՝ ինքնիշխանությունը պետք է զուգորդվի համագործակցության հետ: Իր ելույթում Մակրոնը նաև անդրադարձավ Իրանի շուրջ ստեղծված ճգնաժամին՝ նշելով ԱՄՆ-ի և Իրանի միջև բանակցությունների վերսկսման անհրաժեշտության մասին: Ֆրանսիայի նախագահը ՄԱԿ-ի ԳԱ 74-րդ նստաշրջանի ընթացքում նաև փորձել է ԱՄՆ և Իրանի նախագահների միջև միջնորդական դերակատարություն ստանձնել, սակայն այդ փորձերը դրական արդյունք չեն ունեցել: Ելույթում նաև հպանցիկ անդրադարձ եղավ ռուս-ուկրաինական հակամարտությանը[6]:

Գերմանիայի արտգործնախարար Հեյկո Մաասի հիմնական ուղերձը վերաբերում էր արտաքին քաղաքականության մեջ կայունության գաղափարին, որը նրա համոզմամբ՝ հենց բազմակողմ արտաքին քաղաքականությունն է: Վերջինս նաև քննադատեց ՄԱԿ-ի ԱԽ-ի գործունեությունը, որը ըստ նրա՝ պետք է ոչ թե արձագանքի աշխարհի տարբեր հատվածներում ի հայտ եկող հակամարտություններին, այլ իր որոշումներով կանխի դրանք: Սաուդյան Արաբիայում նավթային օբյեկտների վրա հարձակման պատասխանատվությունը դնելով Թեհրանի վրա՝ միաժամանակ Գերմանիայի արտգործնախարարը նույնպես հանդես եկավ ԱՄՆ-ի և Իրանի միջև բանակցությունների վերսկսման օգտին: Անդրադառնալով Ուկրաինայի խնդրին՝ Մաասը, ինչպես Ֆրանսիայի նախագահը, խուսափեց ՌԴ-ի

[5] Address by President Donald Tusk to the 74th United Nations General Assembly (26 September 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2019/09/26/address-by-president-donald-tusk-to-the-74th-united-nations-general-assembly/ (այցելվել է 06.11.2019թ.):

[6] 74th United Nations General Assembly – Speech by M. Emmanuel Macron, President of the Republic, հասանելի է հետևյալ հղումով՝ https://id.ambafrance.org/74th-United-Nations-General-Assembly-Speech-by-M-Emmanuel-Macron-President-of (այցելվել է 06.11.2019թ.):

հասցեին կոշտ մեկնաբանություններից և հանդես եկավ նորմանդական ֆորմատով բանակցությունների շարունակման օգտին[7]:

2. ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ՝ ՄԱԿ-ՈՒՄ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հաշվի առնելով Մերձավոր Արևելքում ստեղծված բարդ և պայթյունավտանգ իրավիճակը՝ մի շարք երկրների ներկայացուցիչներ իրենց ելույթներում անդրադարձել են տարածաշրջանի հիմնական հակամարտություններին և խնդիրներին: Քննարկումները հիմնականում ծավալվեցին Պարսից ծոցում և Իրանի շուրջ ստեղծված իրավիճակների, Սիրիայում, Եմենում, Պաղեստինում ընթացող հակամարտությունների շուրջ: Տարածաշրջանի գլխավոր դերակատար երկրների ներկայացուցիչները գրեթե բոլոր հակամարտությունների վերաբերյալ իրենց ելույթներում շատ հաճախ միմյանց հակասող տեսակետներ ներկայացրին, որոնց վերլուծությունը թույլ է տալիս նաև հասկանալ վերջիններիս տարածաշրջանային հավակնությունները:

2.1. Էրդողանի ելույթը՝ որպես Թուրքիայի գլոբալ և տարածաշրջանային հավակնությունների արտացոլում

ՄԱԿ-ի ԳԱ-ում ունեցած իր ծավալուն ելույթի ժամանակ Թուրքիայի նախագահ Էրդողանը անդրադարձավ հարցերի լայն շրջանակի: Նախ խոսեց Թուրքիայի գլոբալ հավակնությունների մասին և այդ համատեքստում հանդես եկավ ՄԱԿ-ի ԱԽ բարեփոխման տեսակետի պաշտպանությամբ: Սեփական աշխարհաքաղաքական հավակնությունները քողարկելով աշխարհում արդարության վերականգնման գաղափարների ներքո՝ Էրդողանը մարտահրավեր նետեց ՄԱԿ-ի ԱԽ գործող կառուցվածքին: Ըստ նրա՝ «աշխարհը ավելի մեծ է, քան ԱԽ-ում ընդգրկված 5 երկրները», ուստի Թուրքիայի նախագահը ակնարկում էր այն ընդլայնելու անհրաժեշտության մասին՝ չթաքցնելով ԱԽ մշտական անդամ դառնալու Թուրքիայի մտադրությունը:

Թուրքիայի գլոբալ հավակնությունների մասին էին վկայում նաև Էրդողանի հայտարարությունները՝ կապված միջուկային զենքի խնդրի հետ: Ըստ նրա՝

[7] Speech by Foreign Minister Heiko Maas at the General Debate of the 74th session of the General Assemblyof the United Nations(25.09.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.auswaertiges-amt.de/en/newsroom/news/maas-general-assembly/2250142 (այցելվել է 06.11.2019թ.):

միջուկային զենք ունենալու իրավունքը պետք է կա՛մ թույլ տրվի բոլորին, կա՛մ արգելվի բոլորին: Ուշագրավ է, որ Էրդողանը նախկինում նույնպես ակնարկել էր միջուկային զենք ունենալու մտադրությունների մասին: Աշխարհում արդարության հաստատման համատեքստում Էրդողանը փորձում էր նաև Թուրքիան ներկայացնել որպես ամենամարդասիրական երկրներից մեկը՝ նշելով, որ իր երկիրը «աշխարհում ամենաշատ տեղահանվածների ընդունող երկիրն է»:

Այնուհետ իր ելույթում Էրդողանը սահուն անցում կատարեց տարբեր երկրների նկատմամբ իր պահանջները ներկայացնելուն և Թուրքիայի իրականացրած գործողությունների արդարացմանը: Այսպես, նա դժգոհեց փախստականների համար ԵՄ-ի կողմից տրվող աջակցությունից, իսկ Թուրքիայի «մարդասիրական կերպարը» ավելի տպավորիչ դարձնելու համար Էրդողանը ամբիոնից ցույց տվեց ծովափին մահացած սիրիացի փախստական երեխայի հայտնի նկարը:

Ելույթի հաջորդ հատվածում Էրդողանը անդրադարձավ տարածաշրջանի գրեթե բոլոր հակամարտություններին և ներկայացրեց դրանց վերաբերյալ Թուրքիայի դիրքորոշումները: Մասնավորապես, մանրամասնորեն անդրադարձավ սիրիական և իսրայելա-պեղեստինյան հակամարտություններին, ինչպես նաև խոսեց Լիբիայի, Կիպրոսի, Եմենի և Կատարի, Իրանի և Սարուդյան Արաբիայի, Քաշմիրի, Աֆղանստանի և ԼՂՀ-ի շուրջ ստեղծված իրավիճակների մասին: Գրեթե բոլոր հակամարտությունների վերաբերյալ Էրդողանը հայտնեց սուբյեկտիվ տեսակետներ՝ ակնհայտորեն պաշտպանելով հակամարտության այս կամ այն կողմին, միաժամանակ քննադատություններ տեղաց Իսրայելի և Եգիպտոսի իշխանությունների հասցեին:

Ելույթի վերջում Թուրքիայի նախագահը փորձեց հանդես գալ մահմեդականների պաշտպանության և տարածաշրջանում վերջիններիս շահերը ներկայացնող գլխավոր դերակատարի դիրքերից: Մասնավորապես, Էրդողանը խոսեց ռոհինջա մահմեդականների խնդրից, դժգոհություն հայտնեց իսլամոֆոբիայի տարածման կապակցությամբ, քննադատեց մզկիթներում տեղի ունեցած վերջին շրջանի ահաբեկչությունները, իսկ մահմեդականների կողմից իրականացվող ահաբեկչական գործողությունները կապեց մի շարք երկրներում մահմեդական միգրանտների նկատմամբ վարվող անհանդուրժողական քաղաքականության հետ: Էրդողանը տարածաշրջանի մահմեդականներին կոչ արեց հաղթահարել շիա-սուննի հակասությունները, ինչը ըստ նրա՝ օտար ուժերի կողմից օգտագործվում է որպես քաղաքական գործիք: Խոսքը ավարտեց հայտարարությամբ, որ Թուրքիան պատրաստվում է ստանձնել ՄԱԿ-ի ԳԱ 75-րդ նստաշրջանի նախագահությունը:

2.2. Անդրադարձը Պարսից ծոցում և Իրանի շուրջ ստեղծված ճգնաժամերին. այդ հարցերում տարբեր երկրների դիրքորոշումները

Պարսից ծոցում ստեղծված ճգնաժամին ՄԱԿ-ի ԳԱ-ում իրենց ելույթների ժամանակ անդրադարձան մի շարք երկրների ներկայացուցիչներ: Այսպես, Սաուդյան Արաբիայի արտգործնախարարը իր ելույթի հիմքում դրել էր քննադատությունները Իրանի հասցեին: Վերջինս Թեհրանին մեղադրեց ինչպես հուսիթներին աջակցություն ցուցաբերելու, այնպես էլ լցանավերի վրա իրականացրած հարձակումների մեջ: Բացի այդ, Սաուդյան Արաբիայի արտգործնախարարը Իրանի վրա դրեց նավթային օբյեկտների վրա սեպտեմբերին իրականացված հարձակման պատասխանատվությունը և միջազգային հանրությանը կոչ արեց կոշտացնել Իրանի դեմ ճնշումը: Սաուդյան Արաբիայում նավթային օբյեկտների վրա հարձակման համար Իրանին մեղադրեցին նաև ԱՄՆ նախագահ Թրամփը, Գերմանիայի արտգործնախարարն ու Իսրայելի վարչապետը:

Իրանը ԱՄՆ նախագահի ելույթի առանցքային թիրախն էր. ինչպես նախկինում, այժմ էլ Թրամփը Իրանին մեղադրեց ահաբեկչության հովանավորման, Եմենում և Սիրիայում պատերազմների հրահրման, հակահրեականության մեջ: Իրանին մեղադրելով Սաուդյան Արաբիայի նավթային օբյեկտների վրա հարձակման մեջ՝ Թրամփը նշեց, թե բոլոր պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն, որպեսզի Իրանին զրկեն ֆինանսական ռեսուրսներից:

Իսրայելի արտգործնախարար Իսրայել Կացը, իր ելույթում Իրանի հասցեին կոշտ քննադատությունից բացի, բոլոր երկրներին կոչ արեց պաշտպանել Իրանի նկատմամբ «առավելագույն ճնշման» քաղաքականությունը: Միաժամանակ վերջինս արաբական երկրներին համագործակցության կոչ արեց՝ նշելով, որ Հորդանանի տարածքով դեպի Հայֆայի իսրայելական նավահանգիստ միջանցքի ձևավորումը Իսրայելի և արաբական աշխարհի միջև տնտեսական համագործակցության խորացման լավ հիմքեր կստեղծի: Կացը արաբական երկրներին առաջարկեց տնտեսական համագործակցության միջոցով հաղթահարել տարաձայնությունները և միասին դիմակայել Իրանին[8]:

ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանին իր ելույթում քննադատեց ԱՄՆ-ի կոշտ պատժամիջոցների քաղաքականությունը՝ նշելով, որ Իրանը պատժամիջոցների ազդեցության ներքո երբեք չի գնա նոր բանակցությունների: Միաժամանակ Ռոհանին

[8] ԻԼ Israel - Minister for Foreign Affairs Addresses General Debate, 74th Session(Sep 26, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=MSjBiEcCmQA (այցելվել է 06.11.2019թ.):

արձանագրեց, որ ԵՄ-ը անկարող է շրջանցել ԱՄՆ-ի պատժամիջոցները: Անդրադառնալով Պարսից ծոցում և Հորմուզի նեղուցում ստեղծված իրավիճակին՝ Իրանի նախագահը առաջարկեց այդ տարածաշրջանի անվտանգությամբ շահագրգռված պետություններին միավորվել այսպես կոչված «Հույսի կոալիցիայում», որը պետք է ապահովի տարածաշրջանի երկրների անվտանգությունն ու համագործակցությունը: Իրանի նախագահը կոչ արեց սեփական ուժերով ապահովել Մերձավոր Արևելքի խաղաղությունն ու անվտանգությունը՝ նշելով, որ ԱՄՆ-ի ներկայությունը միայն ապակայունացնող դեր է խաղում[9]:

Մերձավոր Արևելքում անվտանգության նոր համակարգ ձևավորելու հարցին ՄԱԿ-ում իր ելույթի ժամանակ անդրադարձավ նաև ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը: Նա վերահաստատեց Պարսից ծոցի տարածաշրջանում կոլեկտիվ անվտանգության համակարգ ստեղծելու դեռևս ամռանը ռուսական կողմից ներկայացված առաջարկը. Ռուսաստանը առաջարկում էր ԵԱՀԿ-ի օրինակով Ծոցի տարածաշրջանում ստեղծել անվտանգության և համագործակցության կազմակերպություն[10], որը հնարավորություն կտա առկա հակամարտությունները լուծել խաղաղ ճանապարհով: Անդրադառնալով Իրանի շուրջ ստեղծված իրավիճակին՝ Լավրովը դատապարտեց միջուկային գործարքից միակողմանիորեն դուրս գալու և Իրանի հանդեպ ստանձնած պարտավորությունների կատարման հարցում այլ երկրների վրա ճնշում գործադրելու Վաշինգտոնի գործողությունները:

Չինաստանի արտգործնախարար Վան Ին իր ելույթում նույնպես անդրադարձավ Մերձավոր Արևելքում և Պարսից ծոցում ստեղծված իրավիճակին: Վերջինս կարևորեց Իրանի հետ կնքված միջուկային համաձայնագրով կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, միաժամանակ պաշտպանեց Պարսից ծոցի երկրների շրջանում երկխոսության և համագործակցության հարթակի ստեղծման գաղափարը[11]: Փաստորեն Մերձավոր Արևելքում, մասնավորապես՝ Ծոցի երկրների շրջանում անվտանգության նոր համակարգի ձևավորման գաղափարը աջակցություն

---

[9] Speaking on Wednesday at the 74th Session of the United Nations General Assembly in New York, President Hassan Rouhani said, “Let us invest in hope in a better future instead of war and violence”.(Wed 25 - September 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ www.president.ir/en/111465/printable (այցելվել է 06.11.2019թ.):

[10] Российская Концепция коллективной безопасности в зоне Персидского залива(23-07-2019) հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.mid.ru/ru/foreign_policy/international_safety/conflicts/-/asset_publisher/xIEMTQ3OvzcA/content/id/3733575/pop_up?_101_INSTANCE_xIEMTQ3%E2%80%A6 (այցելվել է 06.11.2019թ.):

[11] Speech by Wang Yi at the General debate of the 74th session of the United Nations General Assembly (full text), հասանելի է հետևյալ հղումով՝ www.chinanewsportal.com/news/2019/0929/0709/5d8fecfb16047879464a5d1b (այցելվել է 06.11.2019թ.):

ստացավ Իրանի, ՌԴ-ի և ՉԺՀ-ի կողմից, մինչդեռ Իսրայելն ու Սաուդյան Արաբիան ԱՄՆ-ի աջակցությամբ հանդես եկան Իրանի դեմ ճնշումն ուժեղացնելու և հակաիրանական կոալիցիայի ձևավորման գաղափարի օգտին:

2.3. Դիրքորոշումները Սիրիայում ընթացող պատերազմի, իսրայելա–պաղեստինյան հակամարտության վերաբերյալ

ՄԱԿ-ի ԳԱ 74-րդ նստաշրջանում ունեցած ելույթով Թուրքիայի նախագահ Էրդողանը փաստորեն հող նախապատրաստեց հերթական անգամ Սիրիա ներխուժման և քրդերի դեմ նոր ռազմական գործողություններ սանձազերծելու համար: Իր ելույթում անդրադառնալով Սիրիայի հակամարտությանը՝ Էրդողանը առաջ քաշեց հակամարտության կարգավորման 3 պայման՝ Սիրիայի տարածքային ամբողջականության պահպանում, Իդլիբում հնարավոր կոտորածի կանխում, Սիրիայի հյուսիսում՝ Եփրատից արևելք PKK-ի և YPG-ի ոչնչացում: Թուրքիայի նախագահը հայտարարեց, որ իրենք ձգտում են 30 կմ խորությամբ և 480 կմ երկարությամբ անվտանգության միջանցք ստեղծել Սիրիայում (քրդերի վերահսկողության տակ գտնվող տարածքներում):

Էրդողանն իր ելույթում նշում էր, որ Սիրիայի հյուսիսում անվտանգության գոտու ձևավորման ծրագիրը պետք է իրականացվի ԱՄՆ-ի և ՌԴ-ի հետ համագործակցությամբ, սակայն ինչպես ցույց տվեց իրադարձությունների հետագա ընթացքը, վերջիններս հրաժարվեցին առնվազն հրապարակային աջակցություն ցուցաբերել Թուրքիայի նախաձեռնությանը: Սիրիայում հետագա ռազմական գործողությունները արդարացնելու համար Էրդողանը հայտարարեց, որ մտադիր է անվտանգության գոտին բնակեցնել մի քանի միլիոն տեղահանված սիրիացիներով: Հոկտեմբերի 9-ին Թուրքիայի ԶՈՒ-ի ներխուժումը Սիրիա և դրա արյունալի հետևանքները՝ հարյուրավոր զոհերն ու հարյուր հազարավոր տեղահանվածները, ցույց տվեցին, որ Թուրքիան մարդասիրական կոչերի հետևում թաքցրել էր իր հերթական ծավալապաշտական ծրագիրը: Միաժամանակ, Թուրքիայի ներխուժումից հետո ԱՄՆ-ի և ՌԴ-ի վարքագիծը, մասնավորապես՝ ամերիկյան զորքերի դուրսբերումը քրդաբնակ տարածքներից, ի վերջո Սոչիում ռուս-թուրքական համաձայնությունները ցույց տվեցին, որ Թուրքիայի գործողությունները ինչ-որ չափով համաձայնեցված էին գերտերությունների հետ:

ԱՄՆ նախագահ Թրամփը իր հակագլոբալիստական, հակաինտերվենցիոն ելույթով նույնպես կանխորոշեց Սիրիայում ԱՄՆ-ի հետագա գործողությունների ընթացքը: Այդ երկրից ամերիկյան զորքերի մեծ մասի դուրսբերումը հետագայում Թրամփը բացատրեց հենց այդ տրամաբանության ներքո: Իր հերթին ՌԴ

արտգործնախարար Լավրովը ելույթի ժամանակ հայտարարեց, որ ռուսական կողմը մտահոգիչ է համարում մի շարք երկրների համար պայթյունավտանգ «քրդական խաղաքարտի» շահարկման փորձերը: ՄԱԿ-ում ունեցած իր ասուլիսի ժամանակ Լավրովը նաև կարևորել էր Սիրիայում սահմանադրական կոմիտեի ստեղծումը, որը պետք է խթանի իշխանական և ընդդիմադիր գործիչների համագործակցությունը[12]: Մյուս երկրների ներկայացուցիչները իրենց ելույթներում հիմնականում աջակցություն հայտնեցին Սիրիայում հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին:

Գերտերությունների և տարածաշրջանի երկրների ներկայացուցիչները իրենց ելույթներում անդրադարձան նաև իսրայելա-պաղեստինյան հակամարտությանը: Իսրայելի արտգործնախարարը իր ելույթում Պաղեստինի իշխանություններին կոչ էր անում հրաժարվել Իրանի հետ համագործակցությունից և ճանաչել Իսրայելի պետության գոյության իրավունքը:

Հակամարտությանը իր ելույթում ծավալուն անդրադարձ կատարեց Թուրքիայի նախագահ Էրդողանը՝ դատապարտելով ԱՄՆ-ի կողմից Երուսաղեմի ճանաչումը որպես Իսրայելի մայրաքաղաք: Էրդողանը նաև քննադատեց ԱՄՆ-ի կողմից առաջ քաշած իսրայելա-պաղեստինյան հակամարտության կարգավորման «դարի գործարքը», իսկ Իսրայելին մեղադրեց պաղեստինյան տարածքները գրավելու և դրանց էթնիկ կառուցվածքը փոխելու մեջ: Իր ելույթում Իսրայելի արտգործնախարար Կաացը արձագանքեց Էրդողանի հայտարարություններին՝ վերջինիս հորդորելով նախ ուշադրություն դարձնել սեփական երկրում քրդերի նկատմամբ ճնշումների և ահաբեկիչների հետ համագործակցության հանգամանքներին:

Իրանի Նախագահը իր ելույթներում անդրադառնալով իսրայելա-պաղեստինյան հակամարտությանը՝ նույնպես դատապարտեց ԱՄՆ-ի առաջ քաշած «դարի գործարքը»: «Երկու պետության» սկզբունքի պաշտպանությամբ հանդես եկան նաև ՌԴ և ՉԺՀ արտգործնախարարները:

[12] Выступление и ответы на вопросы СМИ Министра иностранных дел России С.В.Лаврова в ходе пресс-конференции по итогам недели высокого уровня 74-й сессии Генеральной Ассамблеи ООН, Нью-Йорк, 27 сентября 2019 года (28.09.19), հասանելի է հետևյալ հղումով՝ http://www.mid.ru/ru/press_service/minister_speeches//asset_publisher/7OvQR5KJWVmR/content/id/3822554 (այցելվել է 06.11.2019թ.):

3. ՄԱԿ-Ի ԳԱ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՄԱՐ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Ինչպես նշվեց, ՄԱԿ-ի ԳԱ նստաշրջանի շրջանակներում ելույթներ ունեցան նաև Հարավային Կովկասի 3 երկրների ներկայացուցիչները և փորձեցին ներկայացնել իրենց արտաքին քաղաքական գերակայությունները: Այդ ելույթների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմել տարածաշրջանում առկա իրողությունների մասին, հասկանալ նշված երկրների առաջնահերթությունները:

3.1. ՄԱԿ-ում Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ներկայացուցիչների ելույթների հիմնական շեշտադրումները

ՄԱԿ-ի ԳԱ 74-րդ նստաշրջանում ունեցած ելույթի ժամանակ ՀՀ վարչապետը Փաշինյանը փորձեց ներկայացնել Հայաստանի քաղաքական առաջնահերթությունները: Վերջինիս ելույթը կարելի է պայմանականորեն բաժանել երկու մասի: Առաջին հատվածը ամբողջությամբ նվիրված էր Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությանը, դրա վերաբերյալ միջազգային արձագանքին և իշխանափոխությունից հետո Հայաստանում տեղի ունեցած փոփոխություններին: Փաշինյանի՝ արտաքին աշխարհին ուղղած հիմնական ուղերձը Հայաստանի ժողովրդավարական կերպարի մատուցումն էր: Իր ելույթում հույս հայտնելով, թե «միջազգային հանրության բոլոր անդամները կցանկանային, որ հայկական ժողովրդավարությունը հաջողի», միաժամանակ վարչապետը լուրջ մարտահրավեր համարեց գործընկերների միջև տարաձայնությունների թնջուկում հայտնվելու հեռանկարը:

Վարչապետի ելույթի երկրորդ հատվածը նվիրված էր Արցախյան հակամարտությանը և դրա կարգավորման ուղղությամբ գործող կառավարության մոտեցումներին: Բացի նշված հարցերից, Փաշինյանն իր ելույթում երկու անգամ հպանցիկ անդրադարձ կատարեց ցեղասպանության հարցին, խոսեց Թուրքիայի ապակառուցողական գործողություններից և ՀՀ արտաքին քաղաքական օրակարգի որոշ այլ խնդիրներից[13]:

[13] Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 74-րդ նստաշրջանում (26.09.2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/09/26/Nikol-Pashinyan-74th-session-of-UN-General-Assembly/ (այցելվել է 06.11.2019թ.):

Ադրբեջանի արտգործնախարար Մամեդյարովը իր ելույթի առաջին հատվածում անդրադարձավ ՄԱԿ-ի դերակատարությանը և այդ համատեքստում խոսեց ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերի կատարման անհրաժեշտության մասին: Այնուհետև փորձեց Ադրբեջանը ներկայացնել որպես չեզոք երկիր՝ հիշատակելով անդամակցությունը Չմիացման շարժման կազմակերպությանը, ինչպես նաև կարևորելով հոկտեմբերի 24-25-ը շարժման հերթական գագաթնաժողովը Բաքվում անցկացնելու հանգամանքը: Մամեդյարովի ելույթի մի փոքր հատվածը նվիրված էր վերջին 15 տարիների ընթացքում Ադրբեջանի տնտեսական հաջողությունների նկարագրությանը: Նա հերթական անգամ փորձեց Ադրբեջանը ներկայացնել որպես ազգային, կրոնական և մշակութային հանդուրժողականության կենտրոն, էներգետիկ և տրանսպորտային կարևոր հանգույց: Մամեդյարովի ելույթի երկրորդ հատվածը նույնպես նվիրված էր Արցախյան հակամարտությանը[14]:

Վրաստանի վարչապետ Սալոմե Զուրաբիշվիլին իր ելույթում անդրադարձավ ավելի գլոբալ հարցերի: Մասնավորապես, նրա ելույթի առանցքային շեշտադրումներն էին՝ ժողովրդավարական արժեքները և դրանց հավատարիմ մնալու ուղղությամբ Վրաստանի ջանքերը, համաշխարհային առողջապահական, կլիմայական խնդիրները և այլն: Ուշագրավ է, որ Վրաստանի նախագահը իր ելույթում փորձում էր երկիրը ներկայացնել որպես տարածաշրջանի ամենակայուն և ժեղովրդավարական երկիր, որը ձգտում է Հարավային Կովկասում խաղաղության և համագործակցության միջավայր ձևավորել:

Տարածաշրջանային խաղաղության մասին հայտարարությունների համատեքստում Զուրաբիշվիլին իր ելույթում անդրադարձավ նաև Ռուսաստանի հետ ունեցած հակամարտություններին, սակայն վերջինիս նկատմամբ իր գնահատականներում համեմատաբար զուսպ էր և հանդես էր գալիս ավելի կառուցողական դիրքերից: Ուշագրավ է, որ Նյու Յորքում ՄԱԿ-ի ԳԱ շրջանակներում շվեյցարական կողմի միջնորդությամբ տեղի ունեցավ Վրաստանի և ՌԴ-ի արտգործնախարարների վերջին 12 տարվա մեջ առաջին հանդիպումը[15]: Թեև բանակցությունները կոնկրետ ձեռքբերումների չհանգեցրին, սակայն երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայության պարագայում թեկուզ միայն հանդիպման փաստը գնահատվեց որպես դրական տեղաշարժ:

---

[14] AZ Azerbaijan - Minister for Foreign Affairs Addresses General Debate, 74th Session(Sep 28, 2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=6RHLC4fNbrc (այցելվել է 06.11.2019թ.):

[15] President Zurabishvili's UNGA Speech (25/09/2019), հասանելի է հետևյալ հղումով՝ https://civil.ge/archives/321557 (այցելվել է 06.11.2019թ.):

Ընդհանուր առմամբ՝ Հարավային Կովկասի երեք երկրների ներկայացուցիչները ՄԱԿ-ում ներկայացրին գլոբալ և տարածաշրջանային խնդիրների շուրջ իրենց երկրների մոտեցումները: Եթե Հայաստանի ու Ադրբեջանի համար առաջնահերթ խնդիրները կապված էին Արցախյան հակամարտության հետ, ապա Վրաստանը փորձեց շեշտը դնել ավելի գլոբալ հարցերի վրա՝ միաժամանակ ներկայանալով որպես տարածաշրջանում առկա խնդիրների խաղաղ լուծման կողմնակից:

3.2. Արցախյան հակամարտությունը ՄԱԿ-ի գլխավոր ամբիոնից

ՄԱԿ-ի ԳԱ 74-րդ նստաշրջանի ժամանակ, ինչպես ՀՀ վարչապետ Փաշինյանի, այնպես էլ Ադրբեջանի ԱԳ նախարար Մամեդյարովի ելույթների էական մասը նվիրված էր Արցախյան հակամարտությանը: Արցախի խնդրին իր ելույթում անդրադարձավ նաև Թուրքիայի նախագահ Էրդողանը: Նշված ելույթների ժամանակ հակամարտության վերաբերյալ հնչած տեսակետների վերլուծությունը հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմել ԼՂՀ հիմնախնդրի կարգավորման գործընթացի ներկայիս փուլի, կողմերի դիրքորոշումների մասին:

Վարչապետ Փաշինյանը իր ելույթի արցախյան հատվածը կառուցել էր բանակցային գործընթացի վերաբերյալ նախկինում հիմնականում իր կողմից արդեն հնչեցված թեզերի վրա: Այսպես, հիմնական ուղերձն այն էր, որ հակամարտության ցանկացած լուծում պետք է ընդունելի լինի Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի ժողովուրդների համար: ՀՀ վարչապետը նման հայտարարությունը փորձեց ներկայացնել որպես աննախադեպ և կարգավորման նպատակով արված համարձակ քայլ, հետևաբար իր ելույթում Փաշինյանը նշեց, որ Ադրբեջանի նախագահից ակնկալել է հանդես գալ նույնաբովանդակ հայտարարությամբ: Փոխարենը՝ վարչապետը նկատեց, որ Ադրբեջանը ձգտում է հասնել միայն իր համար ընդունելի լուծման՝ փորձելով վրեժխնդիր լինել 90-ականներին և 2016-ին կրած պարտությունների համար, այդ նպատակով զբաղվելով հայատյացության քարոզով:

Մեկ այլ դիտարկում, որ իր ելույթի ժամանակ արեց Փաշինյանը, վերաբերում էր Արցախի կարգավիճակին: Վարչապետը նշեց, որ Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի՝ խորհրդային ժամանակների կարգավիճակի վերականգնման փորձերը հավասարազոր են ԽՍՀՄ վերականգնման գաղափարին: Միաժամանակ հիշատակելով հենց ԽՍՀՄ կազմից ԼՂՀ դուրս գալու հանգամանքը, Ադրբեջանի և Հայաստանի նման՝ միևնույն ընթացակարգով Արցախի ժողովրդի ինքնորոշման փաստը՝ Փաշինյանը շտկեց Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանական ԽՍՀ-ից անկախանալու մասին նախկինում հնչեցրած վտանգավոր վարկածը:

Մյուս կարևոր շեշտադրումը հակամարտության բնույթի մասին էր: Այդ համատեքստում Փաշինյանը հերքեց Ադրբեջանական կողմի մեկնաբանությունները, թե հակամարտությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճ է՝ շեշտելով հիմնախնդրի ակունքներում ազգերի ինքնորոշման և մարդու իրավունքների խնդիրների գերակայությունը: Այս շեշտադրումը կարևոր է, քանի որ նախկինում ՀՀ տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների կողմից հնչեցվել են հայտարարություններ, որոնք համընկնել են ԼՂՀ հակամարտությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճ ներկայացնելու ադրբեջանական քաղաքականության հետ և վերջիններիս համար ավելորդ շահարկման դաշտ բացել: Ելույթի ավարտին Փաշինյանը նորից խոսեց հակամարտության՝ 3 կողմերի համար ընդունելի լուծման անհրաժեշտության մասին՝ կոչ անելով Ադրբեջանի նախագահ Ալիևին միանալ իր կողմից առաջ քաշված բանաձևին:

Ադրբեջանի արտգործնախարար Մամեդյարովը, ով ելույթ ունեցավ ՀՀ վարչապետի ելույթից մի քանի օր անց, Արցախյան հակամարտության վերաբերյալ իր հնչեցրած գնահատականներում ավելի կոշտ էր: Նախ նա կրկնեց հակամարտության վերաբերյալ ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից տարիներ շարունակ կիրառվող բառապաշարը «ագրեսիայի», «Ադրբեջանի տարածքի 20%-ի օկուպացիայի», «1 մլն տեղահանվածների» և այլնի մասին: Այնուհետ նշեց, որ նախորդ 2 տարիների ընթացքում տեղի ունեցած բանակցությունները որևէ առաջընթաց չեն ապահովել՝ որի համար պատասխանատվությունը գցեց հայկական կողմի վրա: Մամեդյարովը Հայաստանի իշխանություններին մեղադրեց խաղաղ գործընթացը սաբոտաժի ենթարկելու մեջ՝ նշելով, որ վերջիններս փորձում են բանակցությունների միջոցով պաշտպանել պատերազմի արդյունքները, իր մեկնաբանությամբ՝ «Ադրբեջանի տարածքների օկուպացիան»:

Մամեդյարովի մյուս դիտարկումները կապված էին Արցախյան հակամարտության վերաբերյալ ՄԱԿ-ի ԱԽ հայտնի բանաձևերի հետ: Նա հայկական կողմին մեղադրեց Արցախում «էթնիկ զտումների», «ցեղասպանության» կազմակերպման, Արցախի տարածքի ռեսուրսների օգտագործման, մշակութային ժառանգության ոչնչացման և այլ «հանցանքների» մեջ: Ըստ Մամեդյարովի՝ ընթացող բանակցությունների առաջնային նպատակը պատերազմի հետևանքների հաղթահարումն է, որը իր բնորոշմամբ ենթադրում է «Ադրբեջանի բոլոր տարածքների վերադարձ և տարածքային ամբողջականության վերականգնում»: Ըստ նրա՝ բանակցությունների վերոհիշյալ պայմանները «պարտադիր են և կոմպրոմիսի ենթակա չեն»: Փաստորեն, ՀՀ վարչապետի՝ 3 կողմերի համար ընդունելի լուծման

մասին կոչին Ադրբեջանի արտգործնախարարը պատասխանեց բոլոր տարածքները վերադարձնելու պահանջով:

Հնչեցնելով ադրբեջանական կողմի անզիջում դիրքորոշումը՝ Մամեդյարովը միաժամանակ սպառնաց, որ բանակցությունները չեն կարող անվերջ շարունակվել: Ադրբեջանի արտգործնախարարը ՀՀ իշխանություններին մեղադրեց ստատուս քվոն պաշտպանելու փորձի մեջ և կոչ արեց հրաժարվել նման քաղաքականությունից: Ուշագրավ է, որ Մամեդյարովի հնչեցրած թեզերը իր ելույթում շահարկել էր նաև Թուրքիայի նախագահ Էրդողանը՝ անընդունելի համարելով «ԼՂ-ի և շրջակա տարածքների օկուպացիան՝ չնայած ՄԱԿ-ի ԱԽ բանաձևերին»: Էրդողանի այս հայտարարությունը հաջորդեց Պաղեստինի հարցում ՄԱԿ-ի ԱԽ որոշումների չկատարման համար Իսրայելի հասցեին հնչեցրած քննադատություններին ու մեղադրանքներին: Փաստորեն, Արցախյան հակամարտությունը դնելով իսրայելա-պաղեստինյան հակամարտության հետ նույն հարթության վրա, Էրդողանը փորձում էր այս հարցի վրա նույնպես կոնսոլիդացնել մահմեդական աշխարհի ուշադրությունը:

Ընդհանուր առմամբ՝ ՄԱԿ-ի ամբիոնից Արցախյան հակամարտության վերաբերյալ հնչեցրած հայտարարությունների ու տեսակետների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հակամարտող կողմերի դիրքորոշումները խիստ հակասական են, իսկ բանակցային գործընթացը գրեթե փակուղում է հայտնվել: Բանակցությունները ձգձգելու և լուծման պատրաստ չլինելու մեջ փոխադարձ մեղադրանքները, ինչպես նաև ստատուս քվոյի պահպանման անընդունելիության մասին Մամեդյարովի և Էրդողանի հայտարարությունները հաստատում են այդ մտահոգությունները: Միաժամանակ մտահոգիչ է արցախյան հարցում Թուրքիայի դրսևորած ակտիվությունը, որը շարունակվեց նաև ՄԱԿ-ի ԳԱ նստաշրջանին հաջորդած ժամանակահատվածում:

Բանակցային գործընթացում առկա խնդիրների մասին են խոսում նաև Մամեդյարովի և Փաշինյանի ելույթներից հետո ՄԱԿ-ում Հայաստանի և Ադրբեջանի մշտական ներկայացուցիչների միջև կոշտ բանավեճը և հնչեցրած փոխադարձ մեղադրանքները: Պատահական չէ, որ երկու կողմերի հայտարարությունների հռետորաբանության կոշտացումը իր շարունակությունը գտավ նաև Վալդայի համաժողովի ժամանակ Ալիևի հայտնի հայտարարությամբ, այնուհետև Աշխաբադում Փաշինյան-Ալիև բանավեճի տեսքով: Ալիևը արցախյան հարցում իր կոշտ դիրքորոշումը ներկայացնելու համար օգտագործեց նաև Չմիացման շարժման կազմակերպության գագաթնաժողովի հարթակը՝ դրա շրջանակներում անցկացնելով հակահայկական տեքստեր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր առմամբ, ՄԱԿ-ի ԳԱ 74-րդ նստաշրջանի կարևոր ելույթների և իրադարձությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել աշխարհում և տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների հետևյալ հիմնական միտումները.

- Ավելի նկատելի է դառնում բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորման գործընթացը, ընդ որում՝ ԱՄՆ-ը Թրամփի նախագահությամբ խառնում է բոլոր խաղաքարտերը: Այժմ ԱՄՆ նախագահը հանդես է գալիս հակագլոբալիստական դիրքերից, համաշխարհային առևտրում պաշտպանում է իր կողմից որդեգրված պրոտեկցիոնիզմը: Միաժամանակ Թրամփի ելույթում կարմիր գծով անցնում էին պետությունների ինքնիշխանության, ազգային առանձնահատկությունների և արժեքների պահպանման գաղափարները: Փոխարենը՝ ազատ շուկայական հարաբերությունների պահպանման, միջազգային տնտեսական ինտեգրման և հակապրոտեկցիոնիստական, «գլոբալիստական» մոտեցումները պաշտպանվում են ՌԴ-ի, ՉԺՀ-ի, Հնդկաստանի, ԵՄ-ի կողմից: Իհարկե, նշված երկրների պատկերացումները գլոբալիզմի և միջազգային ինտեգրման հարցերում զգալիորեն տարբերվում են դեռևս 90-ականներից ԱՄՆ-ի կողմից ակտիվորեն առաջ մղվող «միաբևեռ գլոբալիզմի» գաղափարից:
- ԱՄՆ-ՌԴ հակամարտությունը այլևս Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական օրակարգի գլխավոր հարցը չէ: Թրամփի ելույթում քննադատությունների հիմնական թիրախը ՉԺՀ-ն էր, մինչդեռ ՌԴ-ի վերաբերյալ ԱՄՆ նախագահը գրեթե ոչինչ չխոսեց:
- ԱՄՆ-ի և ԵՄ-ի գլխավոր դերակատարների ելույթներում գրեթե բացակայում էին Ուկրաինայի հարցում (մասնավորապես՝ Ղրիմի կարգավիճակի հետ կապված) ՌԴ հասցեին կոշտ հայտարարություններն ու քննադատությունները: Ընդհանուր առմամբ՝ հետխորհրդային տարածաշրջանի մասին հիշատակումները գերտերությունների ներկայացուցիչների կողմից գրեթե բացակայում էին՝ ինչը կարող է վկայել տարածաշրջանի նկատմամբ վերջիններիս հետաքրքրության որոշակի թուլացման մասին:
- Մերձավոր Արևելքում ավելի նկատելի է դառնում մի կողմից Միացյալ Նահանգների ու դաշնակիցների՝ Սաուդյան Արաբիայի, Իսրայելի և այլն, մյուս կողմից Իրանի և վերջինիս դաշնակիցների հակամարտության խորացումը: ՌԴ արտգործնախար Լավրովի ելույթում կարևոր տեղ էր հատկացված Մերձավոր Արևելքի վերաբերյալ մոտեցումներին, ինչը ընդգծում է տարածաշրջանի նկատմամբ ՌԴ-ի աճող հետաքրքրությունը: Ռուսաստանը դառնում է այս

տարածաշրջանի գլխավոր խաղացողներից մեկը, իսկ Մերձավոր Արևելքում անվտանգության նոր համակարգ ձևավերելու Մոսկվայի առաջարկը համընկնում է նաև Իրանի, ՉԺՀ-ի ներկայացուցիչների տեսակետների հետ: Պատահական չէ, որ Ռուսաստանը փորձում է համագործակցությունը խորացնել նաև Սաուդյան Արաբիայի և տարածաշրջանի մյուս կարևոր դերակատարների հետ, որի լավագույն արտացոլումը Պուտինի վերջին տարածաշրջանային այցերն էին:

- Տարածաշրջանում մի շարք երկրներ վերանայում են իրենց աշխարհաքաղաքական կեցվածքը. Իրանը, Թուրքիան, Իսրայելը, Մերձավոր Արևելքի տարբեր երկրներ ավելի մեծ կարևորություն են տալիս ՌԴ-ի հետ հարաբերություններին: Նույն միտումը նկատվում է Հարավային Կովկասում. Վրաստանը զգալիորեն մեղմացրել է հակառուսական հռետորաբանությունը և Կրեմլի հետ հարաբերությունները կարգավորելու ուղիներ է փնտրում: Ռուս-թուրքական հարաբերությունների ջերմացումը զուգորդվում է ՌԴ-ի հետ համագործակցությունը խորացնելու Ադրբեջանի փորձերով: Ստեղծված իրավիճակը ճիշտ չգնահատելու դեպքում Հայաստանը կարող է կանգնել մեծ ռիսկերի առաջ:
- ՄԱԿ-ի ԳԱ նստաշրջանին անմիջապես հաջորդած իրադարձությունները՝ առաջին հերթին Սիրիայում ստեղծված իրավիճակը, ցույց տվեցին, որ գերտերությունները պատրաստ են մի շարք առանցքային հարցերի շուրջ կուլիսային «առևտրի» գնալ: Ընդ որում, այդ առևտուրը կարող է ընդգրկել շատ տարբեր տարածաշրջաններ և տարաբնույթ հարցեր, մի ուղղությամբ զիջումները կարող են հանգեցնել մեկ այլ ուղղությամբ ձեռքբերումների: Հայաստանը, ներգրավված լինելով Արցախյան հակամարտության մեջ, գերտերությունների հետ իր հարաբերությունները կառուցելիս պետք է հաշվի առնի այս հանգամանքը, քանի որ թերհաշվարկը կարող է անդառնալի հետևանքներ ունենալ:
- Թուրքիայի ակնհայտ տարածաշրջանային հավակնությունները վերջինիս հակամարտության մեջ է դնում մի շարք երկրների հետ: Դա արտացոլվեց նաև ՄԱԿ-ի ամբիոնից Էրդողանի ելույթների, Իսրայելի, Եգիպտոսի և տարածաշրջանի այլ երկրների հասցեին քննադատությունների տեսքով: Նաև այս համատեքստում պետք է դիտարկել ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հանգամանքը, որով ԱՄՆ-ը փաստացի պատժեց Թուրքիային՝ այլ հարցերում դրսևորած անհնազանդության համար: Ուշագրավ է, որ ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի որոշման լոբբիստական աշխատանքներին մեծ մասնակցություն են ունեցել նաև հրեական համայնքի ներկայացուցիչները, ինչը հաջորդել է ՄԱԿ-ի ԳԱ շրջանակներում Թուրիքայի և Իսրայելի ներկայացուցիչների կողմից հնչեցված փոխադարձ մեղադրանքներին: Թեև

Թուրքիայի հետ տարածաշրջանի երկրների հակասությունները կարող են Հայաստանի համար նաև որոշ ռիսկեր պարունակել, սակայն դրանք նաև որոշակի հնարավորություններ են ստեղծում: Հարկավոր է ակտիվացնել աշխատանքը Իսրայելի, Եգիպտոսի, Սիրիայի, տարածաշրջանի մյուս երկրների իշխանությունների հետ, որոնք Թուրքիայի հետ ակնհայտ հակասություններ ունեն՝ փորձելով վերջիններիս կողմից Հայաստանի համար առանցքային հարցերում աջակցություն ստանալ:

- Մեր տարածաշրջանում ամրապնդվում են Չինաստանի դիրքերը, երկրների ներկայացուցիչների մեծ մասը իրենց ելույթներում կարևորում էին Չինաստանի հետ հարաբերությունների զարգացումը:
- Իրանը ԱՄՆ-ի ծանր ճնշումը հաղթահարելու ուղիների փնտրտուքի մեջ է. սրա մասին են վկայում «Հույսի կոալիցիա» ստեղծելու Ռոհանիի առաջարկը, ԵԱՏՄ-ի, ՉԺՀ-ի, Հնդկաստանի հետ հարաբերությունները զարգացնելու փորձերը: Միաժամանակ Իրանը սկսել է ավելի քիչ հույսեր կապել ԵՄ-ի հետ՝ գիտակցելով վերջինիս նկատմամբ ԱՄՆ ազդեցությունը հաղթահարելու անհնարինությունը:
- Ավելի է ընդգծվում Թուրքիա-Ադրբեջան-Պակիստան տանդեմը, որը մեծ ռիսկեր է պարունակում Հայաստանի համար: Չնայած Հնդկաստանի, Իրանի հետ հարաբերությունները ակտիվացնելու փորձերին՝ դրանք դեռևս այն մակարդակի վրա չեն, որ հնարավորություն տան չեզոքացնելու վերոհիշյալ եռյակի սպառնալիքները:
- Արցախյան բանակցությունները հայտնվել են փակուղում. հայկական կողմի զիջողական կեցվածքը միայն ավելի է մեծացնում Բաքվի ախորժակը: Ակնհայտ է, որ ՀՀ իշխանությունների կողմից այն աստիճանի զիջողականությունը, որը ընդունելի լինի Ադրբեջանի համար, կասկածի տակ կդնի ՀՀ իշխանությունների ճակատագիրը հենց Հայաստանում: Իսկ մի կողմից՝ կոշտ դիրքորոշում ցուցադրելու փորձերը, մյուս կողմից՝ որոշակի զիջողականության դրսևորումները, ինչպես նաև բոլորի համար ընդունելի լուծում գտնելու առաջարկները Բաքվի կողմից գնահատվում են որպես բանակցությունները ձգձգելու, դրանց վերաբերյալ ուտոպիստական պատկերացումների, գործընթացը փակուղի մտցնելու փորձեր: Ադրբեջանը օգտագործում է Արցախյան հակամարտության վերաբերյալ ՀՀ իշխանությունների իրարամերժ հայտարարությունները՝ միջազգային հարթակներում այն ներկայացնելով որպես հակամարտության կարգավորման հարցում վերջինիս շահագրգռվածության բացակայություն: Այսպիսով, Ադրբեջանը պատերազմ սանձազերծելու հող է նախապատրաստում՝ ձգտելով ստանալ աշխարհում և տարածաշրջանում գլխավոր դերակատարների լուռ համաձայնությունը: Այս հարցում Ադրբեջանի համար լրացուցիչ ոգեշնչող

հանգամանք կարող է դառնալ Թուրքիայի հերթական ներխուժումը Սիրիա և միջազգային հանրության համեմատաբար զուսպ արձագանքը:

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

1. http://www.mid.ru/ru/foreign_policy/international_safety/conflicts/-/asset_publisher/xIEMTQ3OvzcA/content/id/3733575/pop_up?_101_INSTANCE_xIEMTQ3%E2%80%A6 (այցելվել է 06.11.2019թ.)
2. http://www.mid.ru/ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/3822351 (այցելվել է 06.11.2019թ.)
3. http://www.mid.ru/ru/press_service/minister_speeches/-/asset_publisher/7OvQR5KJWVmR/content/id/3822554 (այցելվել է 06.11.2019թ.)
4. https://civil.ge/archives/321557 (այցելվել է 06.11.2019թ.)
5. https://id.ambafrance.org/74th-United-Nations-General-Assembly-Speech-by-M-Emmanuel-Macron-President-of (այցելվել է 06.11.2019թ.)
6. https://www.aravot.am/2019/10/01/1069523/ (այցելվել է 06.11.2019թ.)
7. https://www.auswaertiges-amt.de/en/newsroom/news/maas-general-assembly/2250142 (այցելվել է 06.11.2019թ.)
8. https://www.consilium.europa.eu/en/press/press-releases/2019/09/26/address-by-president-donald-tusk-to-the-74th-united-nations-general-assembly/ (այցելվել է 06.11.2019թ.)
9. https://www.crisisgroup.org/global/what-changed-worlds-conflicts-un-general-assembly (այցելվել է 06.11.2019թ.)
10. https://www.narendramodi.in/prime-minister-s-address-to-the-unga-546657 (այցելվել է 06.11.2019թ.)
11. https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/09/26/Nikol-Pashinyan-74th-session-of-UN-General-Assembly/ (այցելվել է 06.11.2019թ.)
12. https://www.whitehouse.gov/briefings-statements/remarks-president-trump-74th-session-united-nations-general-assembly/ (այցելվել է 06.11.2019թ.)
13. https://www.youtube.com/watch?v=6RHLC4fNbrc (այցելվել է 06.11.2019թ.)
14. https://www.youtube.com/watch?v=MSjBiEcCmQA (այցելվել է 06.11.2019թ.)
15. www.chinanewsportal.com/news/2019/0929/0709/5d8fecfb16047879464a5d1b (այցելվել է 06.11.2019թ.)
16. www.president.ir/en/111465/printable (այցելվել է 06.11.2019թ.)
17. https://www.crisisgroup.org/global/what-changed-worlds-conflicts-un-general-assembly (այցելվել է 06.11.2019թ.)
18. https://www.crisisgroup.org/global/002-seven-opportunities-un-2019-2020 (այցելվել է 06.11.2019թ.)

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*